ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Հաստատության առաքելությունը 4
3. Հաստատության գործունեությունը 5
- *Դպրոցի կառուցվածքը* 8
4. Հաստատության իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը 9
- *4.1 Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան* 10
- *4.2 Դպրոցի նյութատեխնիկական բազան և ռեսուրսները հաշվետու ժամանակաշրջանում* 11
- *4.3 Կառավարման և խորհրդակցական մարմիններ* 12
- *4.4 Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ* 18
- *4.5 Ուսումնական միջավայրը* 19
- *4.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումը ապահովվող միջոցառումներ* 20
- *4.7 Դպրոցի տրամադրած կրթության որակը* 21
- *4.8 Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները* 22
- *4.9 Դպրոցում առկա հիմնախնդիրները, ուժեղ և թույլ կողմերը* 24
5. Նպատակների և խնդիրների սահմանում 29
6. Հաստատության նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները, կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծախսերը 43
7. Արդյունքների գնահատման չափանիշները. Վերահսկողության մեխանիզմները 48
8. Նպատակների իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները 50

Վերջաբան 52

«Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»

/ՀՀ Սահմանադրություն հոդված 38/

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:

ՀայաստանիՀանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Արագ վերափոխվող աշխարհում կրթության դերն աճում է օրեցօր. այն վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը, իսկ հանրակրթական դպրոցը, հատկապես ավագ դպրոցը, հանդիսանում է այն կարևոր օղակը, որտեղ կրթվում, դաստիարակվում և կերտվում են հասարակության քաղաքացիներ՝ իրենց բնորոշ գաղափարական հիմնադրույթներով, գիտելիքներով, դիրքորոշումներով, հմտություններով և արժեքներով:

Ներկայումս ՀՀ-ում իրականացվում են կրթության ոլորտի բարեփոխումներ, որը ժամանակատար գործընթաց է և որին հասնելու համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվելու է լուրջ և նպատակաուղղված աշխատանք, իսկ նոր ներդրվող ՀՊՁ հնարավորություն կտա լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կոտրելու կարծրատիպեր, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու հետագա զարգացման համար:

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակվել և կազմվել է՝ հիմք ընդունելով դպրոցի կրթական, դաստիարակչական, ֆինանսական և այլ ցուցանիշներ: Այն հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարության պլանավորում և առնվազն հինգ տարվա տեսլական:

«Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է»

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի հիմնական առաքելությունն ապագայի մարտահրավերներին դիմակայող, հստակ արժեհամակարգով մարդ կերտելն է, միաժամանակ ազգային հենքի վրա սովորողներին որակյալ կրթություն տալն է՝ կազմակերպելով առարկաների խորացված և արդյունավետ ուսուցում, ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը՝ հետագա շարունակական մասնագիտական կողմնորոշմամբ, և՛ կյանքում և՛ աշխատանքում իր տեղը գտնելու կարողությամբ:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորվում է ուսումնադաստիարակչական գործընթացում հասնել նրան, որ սովորողներն իրենք վերջնական որոշման հանգեն, թե ի՞նչն է ճիշտ, ի՞նչը՝ սխալ, ո՞րն է կարևոր, ո՞րը՝ ոչ, կարողանան հարցեր առաջադրել և գտնել լուծումներ, փաստարկել իրենց դիրքորոշումը, արդյունավետ աշխատել, ինքնակատարելագործվել, գնահատել իրենց աշխատանքի արդյունքը, շարունակել սովորել, պատրաստ լինել պատասխանատու որոշումներ կայացնելուն, կարողանալ շփվել ու համագործակցել, քննադատաբար մտածել և այլն:

Դպրոցի կարգախոսն է՝

Դպրոցը սոսկ գիտելիք և հմտություն փոխանցելու վայր չէ. այն պետք է նաև արժեքներ փոխանցի:

Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական ռազմավարական նպատակը դպրոցի համալիր կրթական միջավայրի ձևավորումն է, կրթության գործընթացի բոլոր մասնակիցների (սովորողի, սովորողի ծնողի, մանկավարժների, վարչական աշխատողների, խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և այլն) թիմային, համագործակցված աշխատանքի արդյունքում որակյալ և հասանելի կրթության ապահովումը՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական ոլորտի նորարական զարգացման պահանջներին համապատասխան:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի լրիվ անվանումն է ՀՀ ԿԳՄՄՆ «Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ: Դպրոցը շահագործման է հանձնվել 1967 թվականին, ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 10-ի N 867 որոշման համաձայն դարձել է թիվ 1 և թիվ 2 դպրոցների իրավահաջորդը, իսկ ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 11-ի N 664-Ն որոշման համաձայն վերանվանվել է ՀՀ ԿԳՆ «Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն: 2003թ. օգոստոսի 29-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Սևանի տարածքային բաժնում: Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2010թ. հունվարի 24-ին, իսկ փոփոխված տարբերակները՝ 2017թ. հոկտեմբերի 24-ին և 2020թ. նոյեմբերի 19-ին:
Նախարարության կողմից տրված Ա-0370 համարի լիցենզիայով դպրոցն իրավունք ունի իրականացնելու 3-րդ աստիճանի կրթական ծրագիր:

Դպրոցի շենքը տիպային է՝ 6262.14 մ^2 ընդհանուր մակերեսով, ունի 4 /չորս/ մասնաշենք, որոնցից 2 / երկու/-ը 2019թ. համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ հիմնանորոգվել է:

Ընդհանուր հզորությունը 600 /վեց հարյուր/ աշակերտ-տեղ է: Աշակերտների ընդհանուր թիվը 2023թ. հունվարի 01-ի դրությամբ 226 է /երկու հարյուր քսանվեց/: Դպրոցն ունի մարզադահլիճ, նիստերի դահլիճ, արհեստանոց, 4 /չորս/ լաբորատորիա, առարկայական կաբինետ, համակարգչային դասարան, գրադարան, ՆԶՊ-ի դասասենյակ, զենքի պահեստ, բուժսենյակ, բացօթյա սպորտհրապարակ և 47 /քառասունյոթ/ դասասենյակ, որից 20-ը հիմնանորոգված են: Դպրոցում աշխատում են 57 /հիսունյոթ/ աշխատողներ, 47 /քառասունյոթ/ մանկավարժներ և 10-ը /տասը/ ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատողներ:

Դպրոցն ունի նաև իր խորհրդանիշները՝ զինանշան և դրոշ:

Այս տարիների ընթացքում դպրոցում առաջացել են բազմաթիվ խնդիրներ, դրանց մի մասը հնարավորության սահմաններում լուծում է ստացել:

Վերջին տարիներին կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները մի կողմից

սովորողների առաջ բացում են գիտելիքների և հմտությունների ձեռքբերման և դրանց գործնական կիրառման նոր հնարավորություններ, մյուս կողմից՝ մանկավարժությանն առաջադրում են նոր խնդիրներ ու դրանց լուծման համար նոր մոտեցումների մշակման անհրաժեշտություն:

Կրթական գործընթացն ավագ դպրոցում ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ առաջնակարգ և բանիմաց մանկավարժներ, ովքեր կաշխատեն այն գիտակցությամբ, որ ուսուցիչն անընդհատ պիտի զբաղվի ինքնակրթությամբ, ինքնակատարելագործմամբ՝ բարձրացնելու իր մասնագիտական մակարդակը և զարգացնելու ստեղծագործական ունակությունները: Դպրոցի գործունեությունը հիմնվում է և շարունակելու է հիմնվել ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա և համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի՝ աշակերտ, ծնող, ուսուցիչ, մանկավարժ, վարչական աշխատող և այլն կարիքներին ու հնարավորություններին:

ՀՀ ԿԳՄՍՆ «ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ՏԵՂԵՐԸ

1. *Դպրոցի շենքային պայմանները.*
2. *Դպրոցի նյութատեխնիկական բազան և ռեսուրսները հաշվետու ժամանակաշրջանում.*
3. *Կառավարման և խորհրդակցական մարմինները.*
4. *Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ.*
5. *Ուսումնական միջավայրը.*
6. *Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումը ապահովվող միջոցառումներ.*
7. *Դպրոցի տրամադրած կրթության որակը.*
8. *Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները.*
9. *Դպրոցում առկա հիմնախնդիրները:*

1.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ուժեղ կողմեր՝	**Թույլ կողմեր՝**
- դպրոցը նախատեսված է 600 աշակերտի ուսուցման համար, - ունի անհրաժեշտ ուսումնանյութական բազա, - ապահովված է ներառական կրթության համար թեքահարթակներով, վերելակով, համապատասխան սանհանգույցերով, - ունի նոր գույքով, սարքավորումներով ու նյութերով հագեցած քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի և աշխարհագրության լաբորատորիաներ. առկա է նաև համակարգչային դասասենյակ՝ հագեցված համակարգիչներով և էլ. գրատախտակով, - ունի վերանորոգված մարզադահլիճ՝ հագեցած նոր սպորտային գույքով, բարեկարգված մարզահրապարակ, նիստերի դահլիճ: Դպրոցում գործում է «Արմաթ» լաբորատորիա՝ նույնպես հագեցած նոր գույքով ու տեխնիկայով, - դպրոցում գործում է ջեռուցման և օդափոխության համակարգ, շուրջօրյա սառը և տաք ջրի մատակարարում, առկա է հակահրդեհային համակարգ՝ իր համապատասխան սարքավորումներով, ապահովված է տեսախցիկներով, ունի ներքին հեռախոսային ցանց, - ունի պահեստային ջրամբար. դպրոցի ողջ տարածքը լուսավորված է և ցանկապատված:	✓ գազի, ջրի և հոսանքի գերածախս՝ կապված նոր ջեռուցման համակարգի հետ, ✓ դպրոցի տարածքի կանաչապատում, ✓ 3-րդ և 4-րդ մասնաշենքերի հիմնանորոգում, ✓ դպրոցում տրանսպորտային միջոցի բացակայություն:

1.2 ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Դպրոցը հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից համալրվել է անհրաժեշտ ռեսուրսներով և նյութատեխնիկական բազայով՝ աշակերտական սեղան, աթոռ, պահարան, ուսուցիչների համար նախատեսված սեղան, աթոռ, պահարան, շարժական և մագնիսական գրատախտակներ, համալրվել է նոր լաբորատոր սարքավորումներով, գույքով, նյութերով, դպրոցի բուժկետը՝ համապատասխան գույքով և դեղորայքով:

2022թ. կառավարության կողմից դպրոցին տրամադրվել է 17 մլն ՀՀ դրամ՝ դպրոցի նյութատեխնիկական բազան և ռեսուրսները համալրելու նպատակով:

Դպրոցի նյութատեխնիկական բազան օգտագործվում է շատ արդյունավետ. այն նպաստում է ուսումնադաստիարակչական գործընթացում ժամանակակից կրթական, այդ թվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը: Գույքին խնամքով են վերաբերվում բոլորը, թերություններն անմիջապես վերացվում են: Ամենօրյա աշխատանքում թե՛ աշխատակիցները, թե՛ սովորողները օգտվում են այն բոլոր սարքերից ու սարքավորումներից, որոնք ունի դպրոցը:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի հետագա բարելավման և հին գույքը աստիճանաբար նորով փոխարինելու նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել.

- *ՀՀ Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի*
- *ՀՀ տարածքային կառավարման լիզոր մարմնի*
- *Տեղական ինքնակառավարման մարմնի*
- *ՀՀ Պաշտպանության նախարարության*
- *ՀՀ Առողջապահության նախարարության*
- *Միջազգային կազմակերպությունների*
- *Տարաբնույթ բարեգործական հիմնադրամների*
- *ՀՀ Գործարարների* հետ:

1.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն, դպրոցի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը: Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 23-ի N 444 որոշման իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է:

Դպրոցի խորհրդակցական մարմինները՝ կառավարման խորհուրդը, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդները և 5 մեթոդմիավորումները գործում են կանոնավոր՝ համաձայն ՀՀ օրենքի, դպրոցի Կանոնադրության, և իրականացնում են իրենց վերապահված գործառույթներն ու պարտականությունները:

Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունները, որտեղ հստակ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

Խորհուրդն աշխատանքներ է կազմակերպում իր աշխատակարգին համաձայն. իրականացնում է վերահսկողություն տնօրենի գործունեության նկատմամբ, տնօրենի ներկայացմամբ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, քննարկում է ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները, վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը և օրենքով ու կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ, անհրաժեշտության դեպքում ծանոթանում դպրոցի բոլոր փաստաթղթերին:

➢ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

2023թ. հունվարի 1-ի դրությամբ դպրոցում սովորում է 226 /երկու հարյուր քսանվեց/ աշակերտ: Աշակերտական խորհրդի կազմում ընդգրկված են 40 սովորող: Կրթությունից դուրս մնացած և տնային ուսուցում իրականացնող աշակերտներ չկան: Դպրոցը 2023թ. կոմպլեկտավորվել է հետևյալ կերպ.

h/h	դասարանը	դասարանների թիվը	աշակերտների թիվը		
			ընդամենը	տղա	աղջիկ
1.	X	5	91	47	44
2.	XI	4	71	33	38
3.	XII	3	64	31	33
4.	Ընդամենը 10-12	12	226	111	115

2021-2022թթ. Ունեցել ենք 97 շրջանավարտ, որոնցից 71-ը ընդունվել են ՀՀ տարբեր բուհեր:

Աշակերտները ոչ միայն մտավոր, այլև սոցիալական և հուզական անհատականություններ են: Այդ հատկանիշները կարող են ազդել նրանց սովորելու արդյունավետության վրա: Հասկանալու համար, թե ինչպիսին են մեր աշակերտները պետք է հաշվի առնել.

- *նրանց նախնական գիտելիքները,*
- *մտավոր զարգացումը,*
- *մշակութային դաստիարակությունը,*
- *զարգացվածությունը*
- *զարգանալու սպասելիքները:*

Դպրոցի ուսուցիչները կարողանում են որոշել սովորողների նախնական գիտելիքները (10-րդ դասարան՝ հայտորոշիչ թեստ), սովորողների տարիքային հոգեբանությունը՝ նրանց հետ արդյունավետ աշխատելու համար: Դպրոցում ներդրված է հոգեբանական ծառայություն՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար: Հատուկ ուշադրություն ենք դարձնում

աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Սովորողների ստեղծագործական ունակությունները բացահայտելու նպատակով յուրաքանչյուր դասղեկ ներկայացնում է դասարանի շնորհալի աշակերտներին, նրանց նախասիրությունները, մասնագիտական կողմնորոշվածությունը:

Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում են տարբեր մրցույթների, բանավիճային ակումբների, առարկայական օլիմպիադաների ... Լավագույն արդյունք ցուցաբերած աշակերտները խրախուսվում են դպրոցի կողմից: Հանրապետական օլիմպիադայի հաղթող աշակերտներին պետության կողմից տրվում է կրթաթոշակ: 2020-2021 ուսումնական տարում դպրոցն ուներ կրթաթոշակ ստացող երեք աշակերտ, 2021-2022-ին՝ երկու, ովքեր արժանացել են առաջին և երկրորդ կարգի դիպլոմների: 2019-2020 ուսումնական տարում դպրոցն ունեցել է 1 ոսկեմեդալակիր, իսկ 2020-2021-ին՝ երկու: Դպրոցի շրջանավարտների առնվազն 70%-ը ուսումը շարունակում է Բուհերում:

Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Աշակերտական խորհրդի մեկ անդամ ներկայացված է նախարարին կից աշակերտական խորհրդում: Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս առաջարկություններով՝ ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին վերաբերող հարցերում, պայքարում է ուշացումների դեմ, դասամիջոցներին իրականացնում է հերթապահություն, մի շարք միջոցառումների կազմակերպող օղակ է:

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար հանդիպում ենք դպրոցի սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին, անհրաժեշտության դեպքում քննարկում ուսուցիչների հետ: Անչափ կարևորում եմ աշակերտական խորհրդի հետագա ակտիվացումը աշակերտների կողմից բարձրացված հարցերի խոր և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողական խթանումը:

➢ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Դպրոցում աշխատում են 47 մանկավարժական աշխատող, որից 37-ը՝ ուսուցիչ, 3-ը՝ վարչական աշխատող, 2 ԴԱԿ, 1 հոգեբան, 3 լաբորանտ, 1 գրադարանավար:
Բոլոր առարկաները դասավանդում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ՝ 7 հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 3՝ ռուսաց լեզվի, 3՝ գերմաներենի, 3՝ անգլերենի, 8՝ մաթեմատիկայի, 1՝ ինֆորմատիկայի, 2՝ քիմիայի, 2՝ կենսաբանության, 1՝ ֆիզիկայի, 1՝ աշխարհագրության, 1՝ հասարակագիտության, 2՝ պատմության, 1՝ ՀԵՊ, 1՝ ՆԶՊ, 2՝ ֆիզկուլտուրա:
Դպրոցում գործում են 5 մեթոդմիավորումներ.

- «Հայոց լեզու և գրականություն»
- «Մաթեմատիկա և ինֆորմատիկա»
- «Օտար լեզուներ»
- «Պատմություն և ՆԶՊ»
- «Բնագիտական առարկաներ և ֆիզկուլտուրա»:

Դպրոցի մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի ռազմավարության ընտրությունն է, ուսումնադաստիարակչական գործընթացին մանկավարժների մեթոդական ուսուցման կազմակերպումն ու դասավանդման վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի արդյունավետության վերլուծությունը և այլն: Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջները և պետական ծրագրերի կատարումը:

Դպրոցը համալրված է հմուտ, փորձառու, ստեղծագործ, իրենց մասնագիտությանը կատարելապես տիրապետող, իրենց մասնագիտությունը սիրող պարտաճանաչ և պատասխանատու ուսուցիչներով: Այդ են վկայում, որ դպրոցի 37 մանկավարժներից 15-ը իրականացնում են հեռավար ուսուցում տարբեր մարզերում՝ իրականացնելով «Գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծումը էլեկտրոնային դասավանդման միջոցով» ծրագիրը: 12 մանկավարժներ մասնակցել են կամավոր ատեստավորմանը, նրանցից 8-ը հաղթահարել են 70-95%-ի շեմը և

համապատասխանաբար ստանում են 30% /4 ուսուցիչ/, 40% /3 ուսուցիչ/ և 50% /1 ուսուցիչ/ հավելավճար, իսկ 4-ը հաղթահարել են 60-69% անցողիկ շեմը, սակայն հավելավճար չեն ստանում:

Դպրոցի 7 ուսուցիչներ ունեն 1-ին աստիճանի որակավորման տարակարգ, 1 ուսուցիչ այս պահին դիմել է 3-րդ աստիճանի տարակարգ ստանալու համար: Դպրոցը 2021թ.-ից երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից որպես հերթական ատեստավորում իրականացնող կազմակերպություն, և դպրոցի 11 ուսուցիչներ հանդես են գալիս որպես վերապատրաստող մասնագետներ: 1 ուսուցիչ ԿԲ-ի նախաձեռնությամբ տարածքի դպրոցներում իրականացրել է «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագիրը: Այժմ դպրոցը ԿՁՆԱԿ-ի կողմից ընդգրկվել է մենթոր դպրոցների շարքում՝ ՀՊՁ-ն տարածքի այլ դպրոցներում ներդնելու նպատակով վերապատրաստումներ իրականացնելու համար: Դպրոցի մանկավարժական համակազմը հաստատակամ է իր առաքելության մեջ և հավատարիմ է իր պատգամին. **«Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս...»:**

➢ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ծնողական խորհուրդը կատարում է իր պարտականությունները «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և դպրոցի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում: Ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրենության և աշակերտական խորհրդի հետ, մասնակցում դպրոցի կյանքին: Պարբերաբար ծանոթանում է ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքին, սովորողների կիսամյակային և տարեկան առաջադիմությանը, կազմակերպում է տարբեր միջոցառումներ և այլն: Դասարանների ծնողխորհուրդների և դասղեկների միջոցով կազմակերպվում են մեծ թվով ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ:

Ծնողը դպրոցի առաջին և կարևորագույն գործընկերն է, և մենք աշխատում ենք փոխադարձ վստահության մթնոլորտում: Ակնկալում եմ ծնողական խորհրդի աշխատանքների առավել ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ սերտ համագործակցության միջոցով:

Պետք է կարողանալ ճիշտ գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար:

1.4 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Համայնքի և դպրոցի միջև գործում է փոխադարձ կապ: Դպրոցի սովորողները տեղյակ են համայնքային հիմնախնդիրներին: Նրանք հասկանում են շրջակա միջավայրի նկատմամբ խնամատար վերաբերմունքի կարևորությունը: Ակտիվորեն մասնակցում են համայնքային կյանքին, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը, ակտիվորեն մասնակցում են շաբաթօրյակներին, իսկ համայնքն էլ մասնակցում է դպրոցում կազմակերպված բազմաթիվ ու բազմաբովանդակ միջոցառումներին:

Այսօր դպրոցը համագործակցում է ոչ միայն համայնքի, այլև բազմաթիվ կառույցների հետ.

- *ԿԳՄՍ նախարարության,*
- *Գեղարքունիքի մարզի մարզպետարանի*
- *ԿՀՆԱԿ*
- *ԿՏԱԿ*
- *ԳԹԿ*
- *ՀՄԿ*
- *ՀՀ ավագ դպրոցների*
- *Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ոստիկանության անչափահասների բաժնի*
- *Կրթություն, Սևան թերթ, Գեղամա աշխարհ լրատվամիջոցների*
- *ՀՀ տարբեր մշակութային կենտրոնների*
- *ՀՀ տարբեր բուհերի*

4.5 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսները՝ տեղեկատվական, մարդկային, գործունեական, առարկայա-տարածական, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն գործում նրա վրա:

Դպրոցը ունի գրադարան՝ դասագրքերով, հայերեն, ռուսերեն, անգլերեն և գերմաներեն մեծաքանակ գեղարվեստական գրականությամբ, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությամբ, էլ. գրքերով, համակարգչային տեխնիկայով հագեցած համակարգչային դասարան: Դպրոցն ունի բուժսենյակ, ուսուցչանոց, առարկայական դասասենյակներ, ՆԶՊ կաբինետ, ճաշարան, մարզադահլիճ, նիստերի դահլիճ: Բարենպաստ ուսումնական միջավայրը՝ համապատասխան նյութատեխնիկական բազայով և ռեսուրսներով, նպաստում է դպրոցի ուսումնառության ավելի արդյունավետ և որակյալ կրթություն մատուցելուն: Դպրոցը ձևավորել է հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և պարտականություններին:

Դպրոցում ձևավորվել է նաև սովորեցնելու և սովորելու ավանդույթ:

Ուսումնական միջավայրի համար շատ կարևոր է, որ դպրոցի ուսումնական պլանը կազմվի ըստ սովորողների կարիքների:

2023թ. սեպտեմբերից 10-րդ դասարան հաճախող յուրաքանչյուր սովորողի համար կգրվի անհատական ուսումնական պլան՝ հաշվի առնելով նրանց առարկայական նախասիրությունները: Կրթության գերնպատակն անձի անհատականության կայացումն է, որի գործում մեծ է դաստիարակչական գործառույթի դերը:

Դաստիարակության նպատակն է՝

- *Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.*
- *Ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:*

Դաստիարակության հարցում մեծ պատասխանատվություն են կրում ծնողները և դպրոցը:

Դպրոցի արդի ուսումնական միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ:

4.6 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները զարգացնելու նպատակով նախատեսում եմ իրականացնել հետևյալ միջոցառումները.

- *Ուսումնասիրել և ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում.*
- *Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.*
- *Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.*
- *Նպաստել ուսուցիչների որակավորման բարձրացմանը վերապատրաստումների միջոցով.*
- *Խրախուսել որակավորման տարակարգ չունեցող ուսուցիչներին՝ տարակարգ ձեռք բերելու համար.*
- *Ընդլայնել ՏՀՏ ներդրման գործընթացը, հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից: Այդ նպատակով ինֆորմատիկայի ուսուցչի կողմից կազմակերպել դասընթացներ.*
- *Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով՝ օգտվելով ներդրված պաշարների շտեմարանից:*

Նախատեսում եմ աջակցել մանկավարժներին, մշակել և տպագրել իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը և ստեղծել համապատասխան պայմաններ՝ փորձարարական և հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար:

4.7 ԴՊՐՈՑԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի պահանջմունքներին:

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. *Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:*
2. *Կրթական գործընթացի կատարողականը:*
3. *Կրթական գործընթացի արդյունավետությունը:*
4. *Կրթական գործընթացի որակը տարբեր դասարաններում:*
5. *Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:*
6. *Մասնակցությունն առարկայական օլիմպիադաներին և արդյունքների գրանցումը:*

Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների ուսումնառության աստիճանը բարձրացնելու համար: Այդ են վկայում առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները: Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան: Մեթոդմիավորումները և տնօրենությունը վերահսկում են այդ պլանների կատարումը, դասավանդման որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը, կազմակերպում են առարկայական շաբաթներ: Ներքին վերահսկողության արդյունքում պարբերաբար անցկացվում է գիտելիքների ստուգում և արդյունքների մասին զեկուցվում է մեթոդմիավորումների և մանկավարժական խորհրդի նիստերում: Մեր առջև խնդիր ենք դնում բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման արդյունավետությունն ու որակը:

4.8 ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթական տեխնոլոգիաների զարգացումը էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը: Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալներն ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը: Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն, ըստ իր զարգացման առաջնահերթությունների, ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցն առանձնացնելով մյուս դպրոցներից՝ օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները: Այս հիմնախնդիրները լուծելու նպատակով հարկ ենք համարում ՏՀՏ- ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

Ակնկալում եմ ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի ամենօրյա կիրառման հետևյալ ուղղությունները.

- ✓ *Համակարգիչը՝ որպես գիտելիքների ձեռքբերման և դրանց սպուգման միջոց.*
- ✓ *Համակարգիչը՝ որպես լաբորատոր գործնական աշխատանքներ կատարելու միջոց.*
- ✓ *Համակարգիչը՝ որպես նոր նյութը բացատրելու և ցուցադրելու միջոց.*
- ✓ *Անհատական համակարգիչը՝ որպես ինքնուրույն աշխատանք կատարելու և ինքնակրթության միջոց.*
- ✓ *Համակարգիչը՝ որպես դասավանդման, հետազոտության, դասի կազմակերպման, կառուցման միջոց:*

ՏՀՏ ներդրմամբ կապահովի.

- ✓ *Ուսումնառության համար կյանքին մոտ իրական միջավայր.*
- ✓ *Շփման հաղորդակցության իրական փորձառություն.*
- ✓ *Դպրոցի կառավարման կատարելագործված գործիք.*
- ✓ *Տեղեկատվության ձեռք բերման վերլուծության ժամանակակից գործիք.*
- ✓ *Հետադարձ կապի կշռադատման և գնահատման հնարավորություն:*

4.9 ԴՊՐՈՑՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի խնդիրները սահմանելու համար նախ անհրաժեշտ է բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վեր հանել առկա հիմնախնդիրները, հնարավորությունները և ռիսկերը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
✓ **Փորձառու վարչական կազմ** /Կարողանում է դպրոցավարության աշխատանքները կազմակերպել ըստ տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի, նախատեսված ծրագրերն ու միջոցառումները կատարվում են առանց բացթողումների/ - *Արհեստավարժ վարչական անձնակազմ.* - *Ձևավորված թիմ.* - *Համագործակցային և թիմային աշխատանքի իրականացում.* - *Կառավարման ժողովրդավարական ոճ.* - *Կադրային ճիշտ քաղաքականություն.* - *Կարգապահություն և պատասխանատվություն.* - *Բոլոր օղակների աշխատանքի համակարգվածություն և վերահսկողություն.* - *Մանկավարժների բնականոն աշխատանքի հստակ մեխանիզմ.*	
✓ **Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ** - **Արհեստավարժ ուսուցիչներ** /բոլորն ունեն բարձրագույն կրթություն, տիրապետում են ՏՀՏ-ին, դասավանդման ընթացքում կիրառում են	- Ուսուցչի հասարակական ցածր վարկանիշ

տարաբնույթ մեթոդներ և դիտակտիկ պարագաներ, բոլոր ուսուցիչները վերապատրաստված են:/ - **Դպրոցում ապահովված է բարձր բարոյահոգեբանական մթնոլորտ** /դպրոցն ունի անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված բարձրորակ մանկավարժ-մասնագետներ, աշխատանքից բացակայությունների ցածր տոկոս, մարդկային բարձր որակներ, աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք, աշակերտակենտրոն մոտեցում, սովորողի հաջողության կարևորում և գնահատում, առանձնահատուկ մոտեցում աշակերտի նկատմամբ, ազգային հենքով և ավանդույթով ուսուցում ու դաստիարակություն, ազատ արտահայտվելու հնարավորություն, քննադատական մոտեցում, ուսուցիչ-աշակերտ ճիշտ փոխհարաբերություն, առողջ կոլեկտիվ, համախմբվածություն/:	- Երիտասարդ արհեստավարժ ուսուցիչների դպրոցում աշխատելու ցանկության նվազում. - Ուսուցիչների 50-65 տարեկանների տարիքային ցենզ. - Տարեց ուսուցիչների կողմից ՏՀՏ ոչ լիարժեք տիրապետում և կիրառում. - Ուսուցիչների մասնագիտական և մեթոդական որակավորման բարձրացում:
Դպրոցն ունի պատասխանատու ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ:	**Հաստիքների պակաս**
✓ **Սովորողների ուսումնառություն և այլ գործունեություն**	

- Ուսման նկատմամբ դրական վերաբերմունք. - Հիմնավոր գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեհամակարգի ձեռքբերում. - Ուսուցիչների աշխատանքին տրված բարձր գնահատական. - Անհարգելի բացակայությունների բացառում. - Դպրոցի նկատմամբ սեր և կապվածություն. - Մարզական և մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցություն:	- Սոցիալական կայքերից որոշակի անարդյունավետ կախվածություն. - Որոշ սովորողների մոտ ուսման հանդեպ հետաքրքրության պասսիվություն. - Սոցիալական վիճակի բացասական ազդեցությունը ուսման որակի վրա:
✓ **Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի և այլ մարմինների գործունեություն** - Օժանդակություն երեխաներին՝ կրթություն ստանալու. - Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում. - Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ. - Կառավարման խորհրդի, խորհրդկացական մարմինների բարեխիղճ աշխատանք. - Ժողովրդավարական սկզբունքներով գործող ակտիվ աշակերտական խորհուրդ. - Մասնակցություն համայնքային միջոցառումներին.	
✓ **Նոր նախաձեռնություններ**	

- «Դասը վարում է տնօրենը», «Դասը վարում է փոխտնօրենը» շարքի ներդրում՝ վարչական անձնակազմի և սովորողների շփումը խթանելու նպատակով. - «Դասը վարում է աշակերտը» շարքի ներդրում՝ սովորելու ձգտումը խթանելու նպատակով. - Սովորողների անանուն նամակների ուղղում տնօրենությանը. - Ուսուցչի աշխատանքի խրախուսում. - Աշակերտների կողմից լավագույն նախագծերի խարխուսում.	**Նոր նախաձեռնությունների իրականացման անհամապատասխանություն առկա ֆինանսական միջոցներին**
✓ **Բյուջե, ֆինանսական միջոցներ** - Դպրոցի բյուջեի նպատակային և արդյունավետ օգտագործում. - Աշխատավարձի ժամանակին վճարում. - Փորձառու հաշվապահ.	- Դպրոցի բյուջեն կապված է աշակերտների թվից, - Արտաբյուջետային միջոցների բացակայություն, - Ծնողների կողմից ներդրումների բացակայություն, - Ֆինանսական միջոցների անբավարարություն, - Ձեռնարկատիրական գործունեության բացակայություն: - Նոր, հիմնանորոգված դպրոցի կաթսայատան փորձարկումից բյուջեի գերածախս:
✓ **Ռեսուրսներով ապահովվածություն** - հիմնանորոգված շենք /1-ին և	

2-րդ մասնաշենք/ - նոր գույքով և սարքավորումներով կահավորված լաբորատորիաներ, դասասենյակներ. - Համակարգիչներով հագեցած ՏՀՏ կաբինետ. - Դասագրքերով և գեղարվեստական գրականությամբ համալրված գրադարան. - Նոր մարզագույքով ապահովված մարզադահլիճ. - Համագործակցություն ՀՀ ԿԳՄՄՆ, ԿՁՆԱԿ, ԿՏԱԿ, ՏՄԱԿ, ԳԹԿ, ԱԻՆ, ԲՈՒՀԵՐ, ՀՀ տարբեր մարզերի ավագ դպրոցների, Սևանի տարածքի հիմնական և միջնակարգ դպրոցների, քոլեջի, Արվեստի դպրոցի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, Սևանի համայնքապետարանի, Գեղարքունիքի մարզի լրատվամիջոցների, զարամասերի, ոստիկանության հետ. - Սոցիալական ցանցում /Facebook/ ակտիվություն.	Անբարեկարգ և գույքով աղքատ 3-րդ և 4-րդ մասնաշենքեր /աշակերտների թվի աճի դեպքում վերանորոգման անհրաժեշտություն/ Գրադարանի համալրում նոր էլ. դասագրքերով, համակարգիչներով և էլ գրատախտակով. Դպրոցի կայքի ակտիվացում

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

- *Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացում,*
- *Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում,*
- *Աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարելագործում,*
- *Հայրենասիրական դաստիարակություն,*
- *Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավում,*
- *Աշակերտների առողջության պահպանում,*
- *Դպրոցում արևային էներգիայի համակարգի ներդրում:*

ԴՀԾ-ՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ

1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

1.1 Զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողությունները, բարձրացնել մանկավարժի մեթոդական պատրաստվածությունը

1.2 Ուսուցիչների մեջ բարձրացնել ձևավորող գնահատման հմտությունները

1.3 Զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ կիրառման կարողությունները

ԽՆԴԻՐՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Մանկավարժներին պարբերաբար տեղեկատվություն տալ ժամանակակից մեթոդների վերաբերյալ:
2.Առարկայական մեթոդմիավորումներում քննարկել խնդիրները, բացահայտել կարիքները, օգնել սկսնակ ուսուցիչներին:
3.Ստեղծել բարենպաստ պայմաններ դպրոցի մանկավարժների ինքնակրթության համար:
4. Մշտապես կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ՀՀ ԿԳՄՄՆ երաշխավորված կազմակերպություններում:
5. Պարբերաբար ուսումնասիրել վերապատրաստում անցած ուսուցիչների մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը:
6.Կազմակերպել սեմինար պարապմունքներ, որտեղ փորձառու ուսուցիչները կներկայացնեն իրենց փորձը:
7.Տնօրենության կողմից կազմակերպել դասալսումներ, արդյունքները քննարկել մեթոդմիավորման նիստերում:
8.Խրախուսել մանկավարժներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու և սեփական գիտակրթական նյութերը ներկայացնելու համար՝ ապահովելով նրանց մանկավարժական աճը, արժանիներին խրախուսել տարակարգի ձեռքբերման համար:

1.Կազմակերպել համապատասխան մասնագետի խորհրդատվական սեմինար դպրոցի մեթոդմիավորման նախագահի և ուսուցիչների հետ:
2.Ուսուցիչների միջոցով մշակել ձևավորող գնահատման գործիքները (հարցաթերթ, ռուբրիկ, առաջադրանքներ, թեստեր):
3.Իրականացնել ձևավորող գնահատման արդյունավետության գնահատում, ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել և ընդգծել վերջիններիս կողմից կիրառվող գնահատման ձևերն ու մեթոդները:

1.Համակարգչային բավարար գրագիտություն չունեցող ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:
2.Ուսուցիչների կողմից համակարգչային գիտելիքներ ձեռք բերելու կամ կատարելագործելու նպատակով կազմակերպել ներդպրոցական կամ արտադպրոցական ուսումնական ծրագրեր:
3.Կազմակերպել ինֆորմատիկայի և այլ առարկաների ուսուցիչների կողմից համատեղ վարվող դասեր:
4.Աջակցել ուսուցիչներին իրենց ինքնակրթության գործում:
5.Գրադարանի գործունեության վերակազմակերպում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Որակավորված և մոտիվացված մանկավարժներ.
- ✓ Աշակերտակենտրոն և արդյունավետ ուսումնական գործընթաց.
- ✓ Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում.
- ✓ Մանկավարժների հետազոտական ակտիվացված գործունեություն.
- ✓ Ձևավորող գնահատման իրականացման հմտություններ.
- ✓ Միջազգային էլեկտրոնային ցանցում համաշխարհային և տեղական պաշարների շտեմարանի հմուտ կիրառում.
- ✓ Ուսուցիչների՝ ՏՀՏ գիտելիքների և հմտությունների զարգացում և/կամ խորացում.
- ✓ Գրադարանի գործունեության վերակազմակերպում՝ այն դարձնելով համացանցով և համակարգիչներով հագեցած, վերազինված կենտրոն և գեղարվեստական գրականության ընթերցասրահ՝ ճանապարհ հարթելու և նպաստելու ընթերցասերների թվի աճին:

ՆՊԱՏԱԿ

2. ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

- *օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին,*
- *բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին,*
- *նպատակաուղղել երեխայի արժեքային համակարգի ձևավորումը,*
- *զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,*
- *աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրող,*
- *յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով,*
- *ծնողներին ակտիվորեն ընդգրկել դաստիարակչական գործընթացներում,*
- *ապահովել պայմաններ, որպեսզի դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա,*
- *մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և, բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ,*
- *յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական աջակցություն, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ,*
- *դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր,*
- *ընդլայնել դասերի դաստիարակչական գործառույթը,*
- *հարստացնել դպրոցի առօրյան՝ անձի և քաղաքացու ձևավորմանը միտված ինքնաճանաչման, ինքնակառավարման և ինքնուրույն գործելու անսովոր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողունակություններին նպաստող տարաբնույթ միջոցառումներով,*
- *համագործակցել իրավապահ մարմինների հետ:*

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Նշված գործողությունները կնպաստեն սովորողի արժեհամակարգի ձևավորմանը, կապահովեն մարդասիրության, պետականության ու հայրենասիրության ոգով դաստիարակված մարդու ձևավորումը.
- ✓ Աշակերտները կունենան ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, գիտելիքների համակարգ, ձեռք կբերեն գիտելիքները կյանքում կիրառելու հմտություն, կգիտակցեն իրենց իրավունքներն ու պարտականությունները, կլինեն օրինապահ, ազնիվ, մարդասեր, պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումով օժտված քաղաքացիներ, կհարգեն ազգային և համաշխարհային արժեքները:

ՆՊԱՏԱԿ

3. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

- *յուրաքանչյուր սովորողի կողմից իր ուրույն տեղի ու դերի որոշում՝ հիմնվելով իր ընդունակությունների և հնարավորությունների վրա,*
- *սովորողների ընդգրկում դպրոցի կառավարման գործընթացում,*
- *սովորողների միջև ընկերական փոխհարաբերությունների ձևավորում,*
- *յուրաքանչյուր սովորողի կողմից սեփական կյանքի և գործունեության հնարավորինս ճիշտ կազմակերպում,*
- *ինքնավարության համակարգի՝ որպես դպրոցի դաստիարակչական միջավայրի ստեղծում*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *դպրոցում մշտապես վերահսկել աշակերտական ինքնավարության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները,*
- *ստեղծել բավարար պայմաններ և հնարավորություն ընձեռել դպրոցի աշակերտների կողմից առողջ քննադատություն հնչեցնելու և կարծիքների ազատ փոխանակում իրականացնելու համար,*
- *աշակերտներին ակտիվորեն ներգրավել՝*

  ա/ դպրոցում կարգուկանոնի պահպանման գործընթացում,

  բ/ դպրոցական և ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպման գործընթացում,

  գ/ առարկայական շաբաթների կազմակերպման գործընթացում,
- *դպրոցում պարբերաբար կազմակերպել՝*

  ա/ արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ (տոնական միջոցառումներ, ցերեկույթներ, համերգներ, էքսկուրսիաներ և այլն),

  բ/ դպրոցական հերթապահություններ,

  գ/ ճանաչված անձանց հետ հանդիպումներ,
- *դպրոցում մշտապես օգնություն, խնամք և աջակցություն ցուցաբերել նոր՝ 10-րդ դասարան հաճախող ընկերների նկատմամբ:*

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Կհամախմբվի և կձևավորվի կայուն արժեհամակարգով աշակերտական համակազմ
- ✓ Կձևավորվեն և կպահպանվեն նոր ավանդույթներ.
- ✓ Սովորողները ձեռք կբերեն կյանքի հմտություններ.
- ✓ Կբարձրանա միջոցառումներին մասնակցելու սովորողների ցանկությունն ու պատրաստակամությունը.
- ✓ Անհատի ինքնաբացահայտման և ինքնակայացման համար կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ:

ՆՊԱՏԱԿ

4. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐՆԵՐ

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայացվում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրական գիտակցության մակարդակի նվազումը:
Հայրենիքը միայն հողն ու ջուրը չէ, որ արժանի է և ենթակա է պաշտպանության նրա զավակների կողմից: Հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որի հետ մարդը պետք է աշխատի և որը պետք է ծաղկեցնի, ղեկավարի և դարձնի բարեկեցիկ և արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը պիտի լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր անձի համար պատիվ լինի:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *սովորողների մոտ կատարելագործել իրենց աշխատանքի, ազգի, նրա ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացումը,*
- *նպաստել հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ հայ քաղաքացու ձևավորմանը,*
- *սովորողների կողմից կրճատել տարբեր օրինախախտումների և նրանց մոտ առկա վնասակար սովորույթների մակարդակը,*
- *պահպանել և տարածել ՀՀ պետական խորհրդանիշների (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը, դպրոցի յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա օրհներգը,*
- *բարձրացնել աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանը նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի նկատմամբ,*
- *յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը՝ «Ինձնից է կախված իմ ազգի և պետության ապագան» կարգախոսի արմատավորումով, որով կհիմնավորվի դպրոցի առաքելությունը, այն է. պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր դարձնել սովորողին՝ որպես ապագայի մարտահարվերներին դիմակայելուն պատրաստ մարդուն:*

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

- ✓ Հասնել նրան, որ յուրաքանչյուր սովորող գիտակցի, որ հայրենասիրությունը բնութագրվում է ոչ միայն հայրենիքի նկատմամբ ունեցած սիրով և նվիրվածությամբ, նրա անցյալի ու ներկայի նկատմամբ հպարտությամբ, այլև առաջին հերթին հայրենիքի ապագայի համար զգացած պատասխանատվությամբ, նրա կերտման մեջ իր ակտիվ մասնակցությամբ, պետք է ձգտել հասնել նրան, որ դպրոցում սովորողը դաստիարակվի ոչ թե իբրև գիտելիքների որոշակի պաշար կրող, այլ նախ և առաջ հասարակության քաղաքացի իրեն բնորոշ գաղափարական հիմնադրույթներով, բարոյականությամբ, աշխատանքի ու վարվելակերպի բարձր պատրաստակամությամբ, ձևավորված արժեքային համակարգով, որոնք հաստատապես համադրվում են դպրոցի զարգացման ծրագրի առաքելությանն ու կարգախոսին:

ՆՊԱՏԱԿ

5. ԸՆՏԱՆԻՔ - ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

- *էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը,*
- *բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,*
- *ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ,*
- *նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *ուսումնադաստիարակչական գործընթացներում ծնողների մասնակցության ընդլայնում,*
- *հանձնարարել դասղեկներին, որպեսզի վերջիններս անվերապահորեն ծանոթ լինեն այն աշակերտների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը և տեղեկացված լինեն այն սովորողների մասին, որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են կամ որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ,*
- *ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը,*
- *ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ,*
- *ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, գիտագործնական խորհրդատվությունը, համատեղ ստեղծագործական գործունեությունը,*
- *դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին,*
- *ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:*

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Էլ ավելի կամրապնդվի ծնող-դպրոց համագործակցությունը.
- ✓ Կձևավորվի երեխաների դաստիարակության հարցում ծնողների և մանկավարժական աշխատողների միասնական պահանջ.
- ✓ Կմեծանա աշակերտների՝ ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը.
- ✓ Էլ ավելի կամրապնդվի ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

ՆՊԱՏԱԿ

6. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

- *դպրոցում ապահովել սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմաններ (հակահրդեհային, անվտանգ սննդի, լուսային, ջերմային),*
- *սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ,*
- *պայքարել ծխելու վտանգավոր սովորույթի դեմ:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *հնարավորինս բացառել անորակ սննդի մուտքը դպրոց,*
- *կրթության և դաստիարակության գործընթացում համագործակցել դպրոցի կենսաբանության, ՆԶՊ-ի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ,*
- *հանձնարարել դասղեկներին, որպեսզի սովորողների ֆիզիկական և առողջական վիճակի ուսումնասիրության նպատակով սերտորեն համագործակցեն դպրոցի բուժքրոջ հետ,*
- *առկա հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել արտադպրոցական բժշկական հաստատությունների հետ,*
- *ՆԶՊ-ի ուսուցչի, դասղեկների և ոստիկանության ներկայացուցիչների հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ստեղծմանը,*
- *միջոցառումների, զեկույցների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ) և դրանց վտանգավորությանը,*
- *հաճախակի իրականացնել սպորտային միջոցառումներ,*
- *տարաբնույթ միջոցառումների և հանդիպումների միջոցով սովորողների մոտ մեծացնել իրազեկվածությունը՝ մարդու օրգանիզմի վրա ծխելու վնասակար ազդեցությունների մասին:*

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Սովորողների մոտ առողջ ապրելակերպի նկատմամբ հետաքրքրության աճ.
- ✓ Իրազեկվածության մեծացում ծխախոտի վնասակար ազդեցությունների վերաբերյալ.
- ✓ Ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու պահանջմունքի բավարարման պայմանների ապահովում:

ՆՊԱՏԱԿ

7. ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

ԽՆԴԻՐ

- *Լոկալ ջեռուցման համակարգի փոփոխություն արևային էներգիայով*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

- *Խնդրի բարձրացում և իրականացում պատկան մարմինների և բարերարների միջոցների ներգրավմամբ,*

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

- ✓ Հոսանքի և գազի մինիմալ ծախսեր, բյուջեի խնայողություն.
- ✓ Հոսանքի առավելագույն օգտագործում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

N	Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Ֆինանսական ծախսեր
1.	**Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ 2023-2028թթ. նախատեսվող միջոցառումներ**			
1.1	Շարունակել դպրոցի համալրումը ՏՀՏ-ներով	տնօրեն	պարբերաբար	ՀՀ պետական բյուջե, բարերարներ
1.2	Իրականացնել հնացած սարքավորումների փոխարինելու գործընթացը նորերով	տնօրեն, գույքագրող հանձնաժողով	յուրաքանչյուր տարի	ՀՀ պետական բյուջե, բարերարներ
1.3	Շարունակել գրադարանի համալրման և արդիականացման գործընթացը	տնօրեն, գրադարանավար	պարբերաբար	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ
1.4	Ապահովել առկա գույքի և սարքավորումների արդյունավետ, անվտանգ օգտագործումը	տնօրենություն	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
1.5	Դպրոցում ապահովել ուսումնական գործընթացի մասնակիցների անվտանգ կենսագործունեությունը և միջավայրը. ստուգել լաբորատոր սարքավորումների և գույքի պիտանելիությունը, շենքային պայմանները	տնօրենություն	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
1.6	Դպրոցի կայքէջի կառավարում և կատարելագործում	օպերատոր	մշտապես	Դպրոցի բյուջե

1.7	Արևային համակարգի ներդրում 2023-2028թթ	կառավարման մարմիններ, բարերարներ	2023-2028թթ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, բարերարներ
1.8	Դպրոցի տարածքի կանաչապատում	սպասարկող անձնակազմ, աշակերտներ, ծնող խորհուրդ, համայնք	յուրաքանչյուր տարի՝ մարտ-մայիս ամիսներ	Արտաբյուջետային աղբյուրներ
2.	**Կազմակերպչական և մեթոդական աշխատանքներ**			
2.1	Սևանի տարածքի 9-րդ դասարանցիների հետ հանդիպում, հավաքագրում	տնօրենություն, մանկավարժներ	յուրաքանչյուր տարի՝ մարտ-մայիս ամիսներ	Ծախսեր չեն պահանջվում
2.2	Ժամանակակից ընթացակարգերի, օրենսդրական ակտերի, ուղեցույցների ուսումնասիրում	տնօրենություն	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
2.3	Դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվության պատրաստման կազմակերպում	տնօրենություն	յուրաքանչյուր ուսումնական տարվա օգոստոսի 20-ից սկսած	Ծախսեր չեն պահանջվում
2.4	Ուսուցիչների վերապատրաստումների և ատեստավորման գործընթացների ժամանակացույցի մշակում և կազմակերպում	տնօրենություն	յուրաքանչյուր ուսումնական տարվա փետրվարից սկսած	Դպրոցի բյուջե
2.5	Փորձի փոխանակման կազմակերպում ուսուցիչների համար, երիտասարդ մասնագետների աջակցում	տնօրեն, տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ	պարբերաբար	Ծախսեր չեն պահանջվում
2.6	Սեմինարների, նախագծերի, դասընթացների կազմակերպում և այլ կազմակերպությունների ու դպրոցների	տնօրեն, տնօրենի՝ ՈՒԱԳ և ՄԿԱԳ տեղակալներ	պարբերաբար	Դպրոցի բյուջե

	կազմակերպած միջոցառումներին մասնակցություն			
2.7	Ուսումնական գործընթացի և ներդպրոցական վերահսկողության իրականացում	տնօրենություն	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
2.8	Մեթոդական աջակցություն դպրոցի գրադարանին՝ որպես կրթության որակի բարելավման նախապայման	տնօրենություն	նոր ուսումնական տարվա սկզբին	Ծախսեր չեն պահանջվում
2.9	Նպատակային աջակցության տրամադրում սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին	ՀՀ ԿԳՄՄՆ տնօրենություն, ծնողական խորհուրդ	սեպտեմբեր	ՀՀ պետական բյուջե, բարերարներ
2.10	Ուսուցիչների մասնագիտական աշխատանքների վերլուծություն	տնօրենություն, Մ/Մ նախագահներ	ուսումնական տարվա ընթացքում	Ծախսեր չեն պահանջվում
2.11	Ակտիվացնել ուսուցիչների՝ կամավոր ատեստացիայի մասնակցությունը և տարակարգերի ձեռք բերումը	տնօրենություն, մանկավարժներ	ուսումնական տարվա ընթացքում	Ծախսեր չեն պահանջվում
2.12	Դաստիարակչական աշխատանքներ՝ հիմնված դասղեկական պլանների վրա	տնօրեն, տնօրենի՝ ՄԿԱԳ տեղակալ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
2.13	Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող աշակերտների հետ	տնօրենություն, հոգեբան, ոստիկանության տեսուչ, դասղեկ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
2.14	Համագործակցություն՝ ՀՀ ավագ և տարածքի հիմանական և միջնակարգ դպրոցների հետ	տնօրենություն	ուսումնական տարվա ընթացքում	Ծախսեր չեն պահանջվում

2.15	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Տնօրենություն, դասղեկներ	ուսումնական տարվա ընթացքում	ՀՀ ԿԳՄՄՆ /ամոնեմենտ/
3.	**Դաստիարակչական աշխատանքներ**			
3.1	Միջանձնային հարաբերությունների հանդուրժողականության ձևավորում	դասղեկներ, ԴԱԿ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
3.2	Սովորողների ճանաչողական ակտիվության զարգացում	դասղեկներ, մանկավարժներ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
3.3	Բարեխիղճ և համարժեք կերպով շրջապատում տեղի ունեցող երևույթներին արձագանքելու, սոցիալ-մշակութային ներկա պայմաններում կողմնորոշվելու կարողության ձևավորում	դասղեկներ, ԴԱԿ, մանկավարժներ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
3.4	Արժեքային համակարգի համամարդկային արժեքների, լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ հարգանքի, պատմական հիշողության ձևավորում	մանկավարժներ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
3.5	Ստեղծագործական ունակությունների զարգացում, շրջապատում գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողության զարգացում	մանկավարժներ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
3.6	Աշակերտական ինքնավարության կատարելագործում	ՄԿԱԳ, ԴԱԿ, մանկավարժներ	մշտապես	Ծախսեր չեն պահանջվում
3.7	Շնորհալի և տաղանդաշատ սովորողների բացահայտում և խրախուսում	Տնօրենություն, մանկավարժներ. դասղեկներ	2023-2028թթ.	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ

4.	**Ծնողական խորհրդի դերի բարձրացում**			
4.1	Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ,հանդիպումներ առարկայական ուսուցիչների հետ	տնօրենություն	2023-2028թթ.	Ծախսեր չեն պահանջվում
5.	Բժշկական հաստատության հետ համագործակցություն	տնօրենություն	2023-2028թթ.	Ծախսեր չեն պահանջվում
6.	Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միջոցառումների և սպորտլանդիաների կազմակերպում	տնօրենություն, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, ծնողներ	ուսումնական տարվա ընթացքում	Դպրոցի բյուջե
7.	Ռազմահայրենասիրական տարբեր միջոցառումների կազմակերպում	տնօրենություն, ԴԱԿ, մանկավարժներ, ծնողներ	ուսումնական տարվա ընթացքում	Դպրոցի բյուջե

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Ծրագրի կատարման պատասխանատուներն են.

- *Դպրոցի խորհուրդ.*
- *Դպրոցի վարչական կազմ.*
- *Մանկավարժական համակազմ.*
- *Ծնողական խորհուրդ.*
- *Համայնքի անդամներ.*
- *Դպրոցի սպասարկող անձնակազմ:*

4. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՏԱՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողությունը դպրոցի կառավարման խորհրդի գործառույթն է: Դպրոցի ամենամյա աշխատանքային պլանը կազմվում է ըստ 5-ամյա զարգացման ծրագրի: Ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը: Տարեկան աշխատանքային պլանով նպատակներն ու խնդիրները սահմանվում են ըստ անելիքների առաջնահերթության: Ծրագիրը մշտադիտարկվում և քննարկվում է մանկավարժական խորհրդի և ծնողական խորհրդի կողմից: Ծրագրի իրատեսությունը և նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը: Աշխատանքների իրականացման վերահսկողությունը իրականացվում է դպրոցի կառավարման, մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից: Հաստատության հաշվետվությունները հասանելի են լինում հաստատության շահառուներին՝ պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողներ, համայնք: Ծնողական ժողովներում, ինչպես նաև միջոցառումների և դասարանական ժողովների ժամանակ մատչելի ներկայացվում են կատարված աշխատանքները, իրազեկվում անելիքների մասին: Դպրոցի կայքէջը, ծնողների և աշակերտների համար նախատեսած հայտարարությունների վահանակը, ինչպես նաև դպրոցի ֆեյսբուքյան էջը լիարժեք ծառայում են իբրև իրազեկման, համագործակցության և լուսաբանման հարթակներ: Կազմակերպվում են հարցախույզեր, մոնիտորինգներ, քննարկումներ, վերլուծություններ: Արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է դպրոցի կայքէջում: Անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ, տրվում այլ լուծումներ:

Ժամանակ առ ժամանակ իրականացվում է արդյունքների գնահատում, որը ծրագրի գործողություններով պայմանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիք կծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով կչափվեն ակնկալիքների կատարողականները: Կատարված գործողության ցուցանիշը կունենա համեմատման կետ, որի արդյունքում նախնական և տվյալ պահի կատարած վերլուծությունը կպարզաբանի գնահատականի դինամիկայի աճ կամ նվազում: Աճի դեպքում կունենանք ԴՀԾ-ում սահմանված խնդիրների լուծման արդյունավետություն:

5. ԴԶԾ-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ

Սոցիալ - հոգեբանական ռիսկեր կամ մարդկային գործոնի ռիսկեր

ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԻՍԿԵՐԻ ՏԵՍԱԿԸ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Նորմատիվ - իրավական ռիսկեր	
- Առանձին նորմատիվ-իրավական փաստաթղթերի անլիարժեքություն, որոնք հաշվի չեն առնվել ծրագրի մշակման և ներդրման փուլում: *- Կրթական պրոցեսի մասնակիցների պատասխանատվությունն ու գործունեությունը կարգավորող հոդվածների և նորմատիվ իրավական փաստաթղթերի մեկնաբանման ոչ միանշանակությունը:*	*- Դպրոցի նորմատիվ-իրավական բազայի հետևողական վերլուծություն՝ վերջինիս արդիականությունը, լիարժեքությունն ու լուծման ենթակա խնդիրների համապատասխանությունը պարզելու համար:* *- Դպրոցի ղեկավարության համակարգված աշխատանք մանկավարժական կոլեկտիվի, ծնողական համայնքի և սոցիալական գործընկերների հետ՝ գործունեությունը կարգավորող հոդվածների և նորմատիվ-իրավական ակտերի պարզաբանման նպատակով:*
Ֆինանսատնտեսական ռիսկեր	
- Բյուջետային ֆինանսավորման անկայունություն և անբավարարություն, արտաբյուջետային հովանավորչական ներդրումների և նվիրատվությունների բացակայություն:	*- Դպրոցի բյուջեի ճիշտ և ժամանակին պլանավորում ծրագրային միջոցառումների իրականացման համար, շտկումների իրականացում՝ հաշվի առնելով նոր ուղղություններն ու ծրագրերը:* *- Լրացուցիչ ֆինանսական ներդրումների ընդլայնմանն ուղղված հետևողական աշխատանքներ, բարերարների և հովանավորների ներգրավում:*

- Առանձին մանկավարժների մոտ մասնագիտական նախաձեռնողականության անբավարարություն՝ խորացված ծրագրերի և կրթական տեխնոլոգիաների իրականացման համար: *- Առանձին մանկավարժների անպատրաստությունը կրթական պրոցեսի այլ մասնակիցների հետ համագործակցային հարաբերություններում:* *- Աշխատատարության պատճառով ուսուցիչների ստեղծագործական ներուժի ոչ բավարար օգտագործում:*	*- Որակավորման բարձրացման հաստատության ներքին համակարգի թարմացմանն ուղղված հետևողական աշխատանքներ: Նորարարական պրոցեսների մեջ մանկավարժների ներգրավման մոտիվացիայի արդյունավետ համակարգի մշակում և կիրառում:* *- Խրախուսումների և խթանման տարբեր ձևերի կիրառում:*
Ռեսուրսային – տեխնոլոգիական ռիսկեր	
- Նյութական, տեխնիկական ռեսուրսների բազայի անլիարժեքությունը ծրագրի նպատակների իրականացման համար:	*- Ծրագրի բոլոր բաղադրիչների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բազայի հետևողական վերլուծություն:* *- Անհրաժեշտ գույքի ձեռքբերման լրացուցիչ մեխանիզմների ձևավորում՝ ի հաշիվ համագործակցային հարաբերությունների զարգացման: Մասնակցություն միջազգային, պետական և տարածաշրջանային դրամաշնորհային նախագծերում՝ ռեսուրսների բազայի զարգացման հնարավորությունների ընդլայնման համար:*

Հնարավոր ռիսկերից են նաև երկրում սոցիալական, քաղաքական, տնտեսական անկայուն վիճակի վտանգը, համավարակով և պատերազմով պայմանավորված ոչ կայուն իրավիճակը, որոնք կարող են խոչընդոտել ծրագրի իրականացմանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հաշվի առնելով վերջին տարիներին աշխարհի զարգացման սրընթաց և ոչ միշտ դրական միտումները, անկանխատեսելի մարտահրավերների անխուսափելիությունը՝ վերընտրվելու դեպքում առաջնորդվելու եմ Նելսոն Մանդելայի ***«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար».*** կարգախոսով և ակնկալում եմ, որ մեր դպրոցի շրջանավարտները կունենան այն բոլոր վերջնարդյունքները, որոնք սահմանված են հանրակրթության պետական չափորոշչում:

Այն է՝

- *Կունենան գլոբալ տեղեկացվածություն..*
- *Կունենան քաղաքացիական ներգրավվածություն*
- *Կունենան ֆինանսական և տնտեսական գրագիտություն.*
- *Կունենան քննադատական մտածողություն.*
- *Կլինեն նորարար.*
- *Կլինեն հաղորդակցվող.*
- *Կլինեն մեդիագրագետ.*
- *Կլինեն համագործակցող.*
- *Կլուծեն առօրյա խնդիրները.*
- *Կդրսևորեն ինքնատիրապետում:*

Տնօրենի հավակնորդ՝

Լիաննա Ժորայի Մկրտչյան

20.03.2023թ.